ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/5-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ցանցային մալուխների ձեռքբերման նպատակով վարչապետի աշխատակազմի և «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 24.10.2023թ. կնքվել է «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/5-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 121800.00 հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր ՀՀ դրամ ընդհանուր արժեքով՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ « ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն) պարտավորվում է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ցանցային մալուխները (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ցանցային մալուխների մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 օրվա ընթացքում՝ մինչև սեպտեմբերի 30-ը, սակայն ապրանքը Ընկերության կողմից նշված ժամկետում չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: ***Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե 15 օրից ավելի խախտվել է ծառայության մատուցման ժամկետը***:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և հիմք ընդունելով Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կոզմից ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, վարչապետի աշխատակազմը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ միակողմանի հրաժարվել է 24.10.2023թ. կնքված N ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/5-4 ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջովին լուծված: Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջը՝ Պայմանագիրը լուծելու վերաբերյալ հայտարարությունը 23.12.2024թ. հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ***ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով, Պատվիրատուն արձանագրում է, որ «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն՝ չմատակարարելով Պայմանագրով նախատեսված ապրանքները՝ խախտել է

պայմանագրային պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Միաժամանակ, վարչապետի աշխատակազմը 16.01.2025թ. դրությամբ Ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները վճարված լինելու հանգամանքը հավաստող որևէ փաստաթուղթ չի ստացել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը, և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ